

**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման, օրենսդրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՈՐՈՇՈՒՄ**

**05.01.2022թ. ԹԻՎ 1/02ԲԳ-Ա**

**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումների համար Բանկի նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ հետագայում նման խախտումներ թույլ չտալու, արձանագրված խախտման պատճառները վերացնելուն ուղղված Բանկի կողմից համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու և մինչև 07.02.2022թ. դրանց արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկ տեղեկատվություն ներկայացնելու հանձնարարականներով:**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով երկամսյա ժամկետում բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՅԱՆ**